ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈԼԵԳԻԱ

ՈՐՈՇՈՒՄ

12 ապրիլի 2016 թվականի **թիվ 30** քաղ. Մոսկվա

Այն արտադրանքի ցանկի հաստատման մասին, որի առնչությամբ մաքսային հայտարարագրի ներկայացումն ուղեկցվում է «Գյուղատնտեսական եւ անտառատնտեսական տրակտորների ու դրանց կցորդների անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 031/2012) պահանջներին համապատասխանության գնահատման մասին փաստաթղթի ներկայացմամբ

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 294 որոշմամբ հաստատված՝ «Մաքսային միության մաքսային տարածք այն արտադրանքի (ապրանքների) ներմուծման կարգի մասին, որի առնչությամբ Մաքսային միության շրջանակներում սահմանվում են պարտադիր պահանջներ» հիմնադրույթի 2-րդ կետի «գ» ենթակետի իրականացման նպատակով, «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում տեխնիկական կանոնակարգման մասին» արձանագրության («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 9 հավելված) 8-րդ կետին և Եվրասիական տնտեսական

բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 98 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքի կանոնակարգի թիվ 2 հավելվածի 8-րդ կետին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան **որոշեց.**

1. Հաստատել այն արտադրանքի կից ներկայացվող ցանկը, որի առնչությամբ մաքսային հայտարարագրի ներկայացումն ուղեկցվում է «Գյուղատնտեսական եւ անտառատնտեսական տրակտորների ու դրանց կցորդների անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 031/2012) պահանջներին համապատասխանության գնահատման մասին փաստաթղթի ներկայացմամբ:

2. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց հետո:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի

կոլեգիայի նախագահ՝ Տ. Սարգսյան

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի

կոլեգիայի 2016 թվականի ապրիլի 12-ի

թիվ 30 որոշմամբ

ՑԱՆԿ

այն արտադրանքի, որի առնչությամբ մաքսային հայտարարագրի ներկայացումն ուղեկցվում է «Գյուղատնտեսական եւ անտառատնտեսական տրակտորների ու դրանց կցորդների անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 031/2012) պահանջներին համապատասխանության գնահատման մասին փաստաթղթի ներկայացմամբ

Արտադրանքի անվանումը	ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ ծածկագիր	Համապատասխանության գնահատման մասին փաստաթուղթ	Ծանոթագրություն
1	2	3	4
1. Տրակտորներ եւ կցորդներ՝			
1) տրակտորներ՝ գյուղատնտեսական եւ անտառատնտեսական, անվավոր, 6 կմ/ժ-ից ոչ պակաս առավելագույն հաշվարկային արագություն ունեցող	8701 90 (բացի 8701 90 110 0-ից)	համապատասխանության սերտիֆիկատ	

Արտադրանքի անվանումը	ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ ծածկագիր	Համապատասխանության գնահատման մասին փաստաթուղթ	Ծանոթագրություն
1	2	3	4
2) տրակտորներ՝ գյուղատնտեսական եւ անտառատնտեսական, թրթուրավոր, 6 կմ/ժ-ից ոչ պակաս առավելագույն հաշվարկային արագություն ունեցող	8701 30 000 9	համապատասխանության սերտիֆիկատ	
3) տրակտորային կցորդներ՝ 6 կմ/ժ-ից ոչ պակաս առավելագույն հաշվարկային արագություն ունեցող, գյուղատնտեսական կամ անտառատնտեսական նշանակության բեռների փոխադրման համար նախատեսված	8716 20 000 0 8716 31 000 0 8716 39 300 9 8716 39 510 0 8716 39 590 9 8716 39 800 5 8716 39 800 8 8716 40 000 0	համապատասխանության սերտիֆիկատ	
2. Տրակտորների կամ կցորդների բաղադրիչներ՝			
1) լուսավորման եւ լուսաձայնային սարքեր՝	8512 20 000	համապատասխանության սերտիֆիկատ	
հետևի եզրաչափային լույսեր			
հետընթացի լապտերներ			
արգելակման ազդանշաններ			
շրջադարձի ցուցիչներ			
հեռահար լույսի լապտերներ			

Արտադրանքի անվանումը	ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ ծածկագիր	Համապատասխանության գնահատման մասին փաստաթուղթ	Ծանոթագրություն
1	2	3	4
մոտակա լույսի լապտերներ			
հակամառախուղային լապտերներ			
հետին հակամառախուղային լապտերիկներ			
կայանման լապտերիկներ			
հետևի համարանիշի լուսավորման հարմարանքներ			
2) լուսանդրադարձիչ հարմարանքներ	8708 29 900	համապատասխանության սերտիֆիկատ	
3) հետին տեսանելիության հայելիներ	7009 10 000	համապատասխանության սերտիֆիկատ	
4) ձայնային ազդանշանային սարքեր	8512 30 100	համապատասխանության սերտիֆիկատ	
5) ապակիներ	3926 90 970 9 7007 11 100 7007 21 200	համապատասխանության սերտիֆիկատ	
6) անվտանգության ամրագոտիներ	8708 21 900	համապատասխանության սերտիֆիկատ	
7) արագությունը սահմանափակող սարքեր	8409 91 000 9 8409 99 000 9 8479 89 970 8 8511 80 000 8 8537 10	համապատասխանության սերտիֆիկատ	

Արտադրանքի անվանումը	ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ ծածկագիր	Համապատասխանության գնահատման մասին փաստաթուղթ	Ծանոթագրություն
1	2	3	4
8) արագաչափեր	9029 20 310	համապատասխանության սերտիֆիկատ	
9) կցաքարշակային մեխանիկական սարքեր	8708 29 900 8716 90 900 0	համապատասխանության սերտիֆիկատ	
10) դողեր	4011 61 000 0 4011 92 000 0	համապատասխանության սերտիֆիկատ	
11) շարժիչներ	8407 31 000 0 8407 32 8407 33 000 0 8407 34 8408 20	համապատասխանության սերտիֆիկատ	
12) նստատեղեր	9401 20 000	համապատասխանության սերտիֆիկատ	
13) խցիկներ	8707 90 900 9	համապատասխանության սերտիֆիկատ	

Ծանոթագրություններ. 1. Սույն ցանկի կիրառման նպատակներով անհրաժեշտ է օգտագործել ինչպես արտադրանքի անվանումը, այնպես էլ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ ծածկագիրը։

2. Սույն ցանկը չի տարածվում «Գյուղատնտեսական և անտառատնտեսական տրակտորների և դրանց կցորդների անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 031/2012) 2-րդ կետում նշված հետևյալ արտադրանքի վրա՝

1) տրակտորներ և կցորդներ, որոնք արտադրվում են մեկ անգամ անհատական կարգով, ինչպես նաև անհատական գործունեության կարգով.

2) տրակտորներ և կցորդներ, որոնք Մաքսային միության միասնական մաքսային տարածքում բաց են թողնվել շրջանառության մեջ մինչև Մաքսային միության նշված տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելը, օգտագործվել, շահագործվել կամ նորոգվել են Մաքսային միության միասնական մաքսային տարածքում։